ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ.( 374 10) 73 98 30, 28 06 69,
ֆաքս (374 10) 28 06 69, էլ. փոստ anpp@anpp.am

№ 40-329
30 03 2015թ.

«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/22» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/22» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«ՀԱԷԿ» ՓԲԸ** կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը՝ **սեղմված բնական գազ**:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/22»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, կայանի վարչական շենք հասցեով, 3-րդ հարկ, N 311 սենյակ մինչև **2015թ. ապրիլի 09-ը, ժամը 10:00-ն**: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գայանե Չելյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենքում, ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, կայանի վարչական շենք հասցեով, 3-րդ հարկ, N 311 սենյակ **2015 թվականի ապրիլի 09-ին, ժամը 10:00-ին:**

Գնման առարկա է հանդիսանում **«ՀԱԷԿ» ՓԲԸ** կարիքների համար սեղմված բնական գազի մատակարարումը:

**«ՀԱԷԿ» ՓԲԸ** կարիքների համար՝ սեղմված բնական գազի մատակարարման (որը կազմված է 2 չափաբաժիններից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/22» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**«ՀԱԷԿ» ՓԲԸ** էլեկտրոնային փոստի հասցեն է` anpp@ anpp.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը` մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում`

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով` հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.

նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 13 էջ:

Գլխավոր տնօրեն      Մ.Վարդանյան

Կատարող` Գ.Չնյանյան
Հեռ. 28-23-59